

նում յանուն Յիսուսի և ընթանում բարձր իշխանութեան քմահաճոյքի համաձայն, որ պաշտօնական եկեղեցին դեռ ժողովրդին ձայնատէր չի համարում ու բանի տեղ չի դնում, իսկ ժողովուրդն էլ դեռ չի ըմբռնել իսկական եկեղեցու ոգին և իւր պարտքն ու իրաւունքը՝ իբրեւ այդ եկեղեցու անդամ:

Պետերբուրգից հեռագրով հաղորդում են, որ ռուսական եկեղեցական համաժողովի նախընթաց ընդհանուր ժողովում քննւում էր հոգեւոր զպրանոցների բարեփոխութեան խնդիրը: Երկար ընդդիմախօսութիւններից յետոյ, որին մասնակցում էին Արսէն Եպիսկոպոսը, Գարշակով և Ակոսակով սուսուցչապետները, մինչև հայացաւ պահպանել ընդհանուր տիպարի միջնակարգ զպրանոցներ, որոնք կռնենան ութը դասարան ընդհանուր կրթական դասընթացով և երկու հովուական դասարաններ՝ քահանայութեան պատրաստողների համար:

— Մեզ համար էլ պէտք է դաս լինի այս գեղեցիկ որոշումը և մենք էլ պէտք է որոշ բարեփոխութիւն մտցնենք մեր զպրանոցներում թէ՛ ոչ և առ հասարակ բոլոր սաներին միևնոյն նպատակի համար և նոյն ծրագրով կրթենք. կարծում ենք սա աւելի քան ժամանակակից և հետաքրքիր խնդիր է:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Мірѣ-Божіѣ ամսագրում կարդում ենք.

Անգլիական հոգեւորականութիւնը երբէք իւր ամբողջութեամբ պահպանողական չէ: Աբմատական «Reinolds Newspaper» շաբաթաթերթը հաղորդում է, որ անգլիական հոգեւորականութեան որոշ մասը շատ եռանդուն աջակցութիւն է ցոյց տուել վերջին ընտրութիւնների ժամանակ բանւորական կուսակցութեան: Նոյնը հաստատում է անգլիական հոգեւորականներից մինը, որը յիշեալ լրագրում գրում է հետևեալը. «Որպէս աղատամիտ և ընկերվարական, ես ուրախանում եմ ազատամիտ կառավարութեան դարձին և ընտրութիւնների ժամանակ բանւորական կուսակցութիւնների յաղթանակին: Մենք՝ սուրբ Մատթէոսի եկեղեցուն բոլոր պատկանողներն և հոգեւորականութեան այլ անձինք բոլոր ուժերով պաշտպանում էինք մեր շրջանի

բանւորական թեկնածուներին: Պատուօր Մօլը Նիւէքստլից եռանգազին աշխատում էր իւր շրջանի բանւորական թեկնածուների համար: Պատուօր Պերսի Վադինգտօնը ուժեղ պրօպագանդա է մղել Լանկաշիրի շրջանի Պրեստօն և ուրիշ քաղաքներում յօգուտ բանւորների: Պրեստօնի գլխաւոր քարոզիչ Հերկուէս Բուտլերը նոյնպէս բոլոր միջոցներով պահպանում էր բանւորական կուսակցութեան կողմը: Պատուօր Կոնրադ Նօէլը Լօնդանից յատկապէս գնացել է Բրէդֆօրտ, որպէս զի այնտեղ բանւորների թեկնածութիւնն անցկացնէր: Լէյչէստերում բանւորական անկախ կուսակցութեան գլխաւոր քարտուղար Մակգօնալդը նոյնպէս աջակցութիւն էր քանդում հոգեւորականներից: Տպարանապետ Բօքերտօրը նորմիչում և երկաթուղիների բանւորների պատգամաւոր Ֆարգլէին յաղթանակ տանել կարողացան շնորհիւ գլխաւոր քարոզիչների և մի փոխանորդի»: Ահա այսպէս անգլիական հոգեւորականութեան որոշ մասն անշուշտ տրամադրուած է խիստ յառաջադէմ ողով և այդ պատճառով էլ շարժում է պահպանողական մասի դայրոյթը: «Նըբանը մեզ բաւականին նեղում են, ասում է ազատամիտ հեղինակներից մինը: Ռամկավարական շարժման նպատակը և ռամկավար ամբողջ հոգեւորականութիւնը պատրաստ պէտք է լինի բարոյական և նիւթական ահագին վնասներ կրելու: Ծխի հարուստ անդամները դադարում են եկեղեցու օգտին բան տալուց և շատ անգամ խախտում հին բարեկամութեան կապերը: Բայց վնաս չունի: Եթե մենք զրկանք ենք կրում նիւթապէս, զրա փոխարէն վստահւում ենք գաղափարապէս: Ընտրութիւններին անձամբ մասնակցելուց զատ, մենք աջակցում էինք նաև տարածելով մեր գաղափարները գրականութեան միջոցով: Ճիշտ է, մենք հոգեւորականութեան մեծամասնութիւնը չենք կազմում, բայց զրա փոխարէն մեծ թուով հետևողներ ենք գտնում անգլիական եկեղեցու հոգեւորականութեան երիտասարդ և յառաջադէմ անդամների մէջ: Մօտերքս անգլիական եկեղեցու քահանաներից մէկն առաց. «Լաճելի է մեր ժամանակում ապրելը, երբ բանւորների ձայնը միայնակ չի հնչում պատերի մէջ և հանգիպում կատարեալ անտարբերութեան, այլ առաջ է բերում համակրական ձայնակցութիւն և բանւորները միացած խմբով գործելով, որոնց շարքերում մենք էլ ունենք մեր զինւորները, կը հարկադրեն լսել իրենց և կարտայայտեն իրենց կամքը»: Անգլիական եկեղեցին իւր յառաջադէմ տարրերով միացած է ողջիւղական և բանւորական կուսակցութեան, որին հոգեւորականութեան պաշտպանութիւնը ահագին օգուտ է բե-

բում: Այս բանումն էլ Անգլիան յետ է թողել եւրոպական միւս երկիրները, որտեղ հոգեոտականութիւնը՝ բացի անհատներէց, միշտ գտնուել և գտնուում է պահպանողական կուսակցութիւններէ կողմը՝ միշտ ամենամուր նեցուկ լինելով յետագիմութեան և պահպանողականութեան:

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

ՀԵՆՐԻ ԶՈՐԶ

Հողից լաւագոյն կերպով օգտուելու գլխաւոր արգելքը հողային մասնաւոր սեփականութիւնն է:

Հասարակութեան մէջ տարածուած են շատ սխալ գաղափարներ, որոնց շնորհիւ մարդս չի կարողանում որոշել թէ՛ սրանցից որն է պատահական և որը—արմատական նշանակութիւն ունեցողը: Այդ սխալ գաղափարների տարածմանը մեծապէս նպաստում են ստորին կարգի գրողները և քաղաքատնտեսութեամբ պարագայներն էլ մեծաւ մասամբ համակարծիք են այդ բանում, քան թէ նրանց հակառակ: Սոցա ազդեցութեան շնորհիւ այժմս այն կարծիքն է տիրում հասարակութեան մէջ, որ մարդս կարող է լաւապէս օգտուել այն հողից, որն իրեն սեփականութիւն է կազմում, կամ այլ խօսքով՝ հողից լաւապէս օգտուելու համար հարկաւոր է հողային սեփականութիւնը և հողային անհատական սեփականութեան վերացումն ու համայնատիրութիւնը առաջ կը բերի գոյութիւն ունեցող կարգ ու կանոնի, քաղաքակրթութեան անկումն և հին վայրենի կարգերի դերիշխանութիւն:

Այսպիսի սխալ համոզմունքը մեզ յիշեցնում է պատմագիր Զարլզ Լէմբի բերած մի հատուածը չինական հին